ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1961 Общественные науки

Ե. Հ. Հովհաննիսյան

ԻՐԱՔԸ 1958 Թ. ՀՈՒԼԻՍԻ 14-Ի ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Ընդամենը երկու ժամ անհրաժեշտ եղավ 1958 թ. հուլիսի 14-ի ռևոլյուցիային, որպեսզի նա վերացներ Ֆեյսալ-նուրի Սաիդի նենգած և ծախու ռեժիմը ու երկրում հաստատեր հանրապետական կարգեր։ Բայց ռևոլյուցիան այդպիսի համեմատաբար արագ հաղթանակն անհնար կլիներ առանց այն հերոսական պայքարի, որ Իրաքի բաջարի ժողովուրդը տարիներ ի վեր, և հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, մղում էր օտարերկրյա իմպերիալիստների և ներքին ռեակցիոն կլիկի դեմ։ Ժողովրդական յուրաքանչյուր ելույթ ցնցում էր «սև ռեժիմը», ինչպես ընդունված է անվանել Իրաքի հետպատերազմյան ժամանակաշրջանը, հիմքերը և մոտեցնում նրա անկման օրերը։ Սակայն մեր նպատակը չէ տալ այդ շարժման պատմությունը։ Ներկա հոդվածում մենք ցանկանում ենք հակիրճ կերպով բնութագրել այն իրադրությունը, որ Իրաքում գոյություն ուներ ռևոլյուցիայի նախօրյակին՝ 1957—1958 թվականներին։

Իրաքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա ուներ բոլոր այն գծերը, որոնք հատուկ են օտարերկրյա կապիտալի տիրապետության տակ գտնվող գաղութային ու կիսագաղութային երկրներին. տնտեսության և հատկապես արդյունաբերության չափազանց թույլ զարգացում՝ բնական հարստությունների առկայության պայմաններում, օտարերկրյա կապիտալի տիրապետություն երկրի էկոնոմիկայում, երկրի հարստության թալան, չափազանց ցածր կենսամակարդակ և այնպիսի քաղաքական ռեժիմի առկայություն, որն իր բնույթով հակաժողովրդական էր և պաշտպանում էր օտարերկրյա կապիտալի շահերը։

Իրաքում գլխավորապես տիրապետում էր անգլիական կապիտալը։ Սակայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այնտեղ ավելի ու ավելի էր ներթափանցում ամերիկյան կապիտալը։ Օտարերկրյա կապիտալը ոչ միայն հսկայական շահույթներ էր ստանում՝ շահագործելով Իրաքի բնական հարստությունները, այլև ամեն կերպ արգելակում էր նրա էկոնոմիկայի և հատկապես արդյունաբերության զարգացմանը։ Իրաքը չուներ խոշոր արդյունաբերություն։ Այնտեղ հիմնականում գոյություն ունեին մանր ձեռնարկություններ։ Նախառևոլյուցիոն տարիներին Իրաքում հաշվվում էր մոտ 22400 արդյունաբերական ձեռնարկություններ։ Դրանցից 10157-ը ուներ մեկ բանվոր, 5651-ը՝ երկու բանվոր, 2805-ը՝ 3 բանվոր և այլն։ Պարզ է, որ դրանք արդյունաբերական ձեռնարկություններ չէին, այլ փոքրիկ արհեստանոցներ՝ հիմնված ձեռքի աշխատանքի վրա։ Իրաքում հաշվվում էր միայն 294 ձեռնարկություն, որտեղ աշխատում էին 20 և ավելի բանվորներ։ Իսկ ինչ վերաբերվում է արտադրան-

[1] Տե՛ս, Government of Iraq, Statistical Abstract, Baghdad, 1956, p. 119.

քին, ապա պետք է նշել, որ հիմնականում արտադրվում էր տեքստիլ ապրանքներ, կոշկեղեն, սիգարետներ, պահածոներ, զարեջուր և այլն։ Բացի դրանից արտադրվում էր որոշ բանակի ցեմենտ՝ 1957 թվականին 604 հազ. տոննա, ալ՝ 20 հազ. տոննա՝ և այլն, որոնք նույնիսկ լրիվ չէին բավարարում երկրի կարիքները։ Իրաքի էկոնոմիկայի թույլ զարգացման մասին է խոսում այն փաստը, որ 1957 թ. երկրում սպառվել է ընդամենը 170 հազար տոննա պողպատ կամ յուրաքանչյուր շնչին ընկել է 26 կգ։ Պողպատի սպառման տեսակետից Իրաքն աշխարհում գրավում էր ամենավերջին տեղերից մեկը։ Համեմատելու կարգով նշենք, որ այդ նույն թվականին պողպատ Այժիրում յուրաքանչյուր շնչին ընկել է 28 կգ, Մեքսիկայում՝ 43 կգ, Մալայայում՝ 44 կգ, Կուբայում՝ 45 կգ, Լիբանանում՝ 95 կգ, Իսրայելում՝ 137 կգ, Ճապոնիայում՝ 139 կգ, Կանադայում՝ 403 կգ, ԱՄՆ-ում՝ 568 կգ[3]։ Իսկ հայտնի է, որ պողպատի օգտագործման մակարդակը տվյալ երկրի զարգացման աստիճանի չափանիշներից մեկն է։

Օտարերկրյա մոնոպոլիստներն ամբողջովին իրենց ձեռքն էին բռնել Իրաքի նավթը։ Այն շահագործվում էր «Իրաք Պետրոլիում» կոմպանիայի և նրա դուստր «Բասրա Պետրոլիում» և «Մոսուլ Պետրոլիում» կոմպանիաների կողմից, որոնք միավորում էին անգլիական, ամերիկյան և ֆրանսիական կապիտալը։ Էստ որում, կոմպանիաների ակցիաներից և դիրեկտորական տեղերից և ոչ մեկը չէր պատկանում Իրաքին։ Նավթի հանույթն արդյունաբերության միակ ճյուղն էր, որի զարգացմամբ շահագրգռված էին օտարերկրյա մոնոպոլիաները, որովհետև նրանք դրանցից ստանում էին հսկայական շահույթներ։ Նավթ 1956 թ. արդյունահանվել է 31 մլն 322 հազ. տոննա, 1957 թ.՝ 21 մլն 980 հազ. տոննա, իսկ 1958 թ.՝ 35 մլն 492 հազ. տոննա։ Նավթի արդյունահանման անկումը 1957 թվականին պետք է բացատրել Եգիպտոսի դեմ սանձազերծված եռյակ ագրեսիայով, որի ժամանակ նավթամուղը քանդվեց և նավթի արտահանումը դադարեց։

Այժմ տեսնենք թե նավթի արդյունահանումից ի՞նչ էր ստանում Իրաքը և ինչ էին ստանում մոնոպոլիստները։ Իրաքը որպես եկամուտ ստացել է 1956 թ.՝ 68 մլն 858 հազ. դինար, 1957 թ.՝ 48 մլն 916 հազ. դինար և 1958 թ.՝ 83 մլն 812 հազ. դինար[4]։ Պաշտոնապես նույնքան են ստացել նաև մոնոպոլիստները, որովհետև ըստ 1952 թ. համաձայնագրի, որ կնքվել էր Իրաքի կառավարության և վերոհիշյալ երեք կոմպանիաների միջև, սահմանվել էր 50/50-ի սկզբունքը, այսինքն՝ նավթից ստացվող եկամուտները հավասարապես բաժանվում էին նրանց միջև։ Մոնոպոլիստները Իրաքի նավթարդյունաբերության մեջ ներդրել էին 105 մլն դինար, մինչդեռ 1956-ից մինչև 1958 թվականը նրանք ստացել են 201 մլն 686 հազ. դինարի եկամուտ։ Այս թիվը ստացվում է այն դեպքում, երբ մենք եկամուտների բաշխումը վերցնում ենք ըստ 50/50 սկզբունքի։ Սակայն իրականում այդ սկզբունքը չի պահպանվել։ Ինչպես հայտարարեց Իրաքի ռեսպուբլիկայի ֆինանսների մինիստր Մուհամմեդ Հազիզը, Իրաքը այդ կոմպանիաների դանազան մեքենայությունների և կեղծումների հետևանքով ստացել է եկամուտների միայն 30—35 տոկոսը,

---

[3] United Nations Statistical Yearbook, New York. 1958, p. 150, 229.

[3] Նույն տեղում, 280։

[4] Ежегодник БСЭ, М. 1959, стр. 263.

իսկ մոնոպոլիստները՝ 65—70 տոկոսը[5]։ Գերշահույթը և թալանը կոմպանիաների կողմից, ինչպես ցույց են տալիս վերոհիշյալ թվերը, ակնհայտ է։

Իրաքի էկոնոմիկայի զարգացումն արգելակելու գործում օտարերկրյա իմպերիալիստների ձեռքին որպես գործիք ծառայեց 1950 թ. հիմնված Զարգացման խորհուրդը, որը կազմված էր անգլիական, ամերիկյան և այլ օտար էքսպերտներից ու փաստորեն գտնվում էր Իրաքի կառավարությունից անկախ վիճակում։ Այն ստեղծվեց զլխավորապես երկրի ինդուստրացման նպատակով, ամենայն դեպս, այդպես էին հայտարարում նրա ստեղծողները։

Սակայն իրականում նա զբաղվում էր նրանով, որ իր տրամադրության տակ եղած ֆինանսական միջոցները փոշիացնում էր, ծախսում երկրորդական օբյեկտների վրա և չափազանց քիչ ուշադրություն դարձնում արդյունաբերության զարգացմանը։ Դա երևում է թեկուզ հետևյալ փաստից։ Զարգացման խորհուրդը կազմեց, և կառավարությունը հաստատեց Իրաքի զարգացման այսպես կոչված վեցամյա պլանը (1955—1961 թթ)։ Վեց տարվա համար նախատեսվում էր 488 մլն հազ. դինարի ծախսումներ կամ յուրաքանչյուր տարի՝ մոտ 81 մլն դինար։ Այդ գումարի 51 տոկոսը նախատեսվում էր ծախսել կապի, ճանապարհների և օդանավակայանների վրա, 14 տոկոսը՝ արդյունաբերության, լեռնագործության և էլեկտրիֆիկացիայի վրա, 5 տոկոսը՝ բնակարանային, 1 տոկոսը՝ դպրոցական շինարարության վրա և այլն[6]։

Ինչպես տեսնում ենք, այդ գումարի կեսից ավելին նախատեսվում էր ծախսել այնպիսի օբյեկտների կառուցման վրա, որոնք առաջնակարգ ստրատեգիական նշանակություն ունեին Իրաքի կառավարության և անգլիական ու ամերիկյան իմպերիալիստների համար։

Իմպերիալիստները ոչ միայն շահագործում ու թալանում էին Իրաքի բնական հարստությունները, այլև ստիպում, որ նա իր բյուջեից ֆինանսավորի այնպիսի օբյեկտների կառուցումը, որոնցով ամենից առաջ շահագրգռված էին իրենք՝ օտարերկրյա իմպերիալիստները և որոնք ծառայում էին նրանց շահերին։ Դա իմպերիալիստական քաղաքականության դրսևորումներից մեկն էր։

Զարգացման խորհուրդը պետք է նպաստեր Իրաքի ինդուստրացմանը, մինչդեռ նա իր միջոցների միայն 14 տոկոսն էր հատկացնում արդյունաբերություններ։ Այդ գումարը մի քիչ ավելի էր այն գումարից, որ հատկացվում էր պալատների, հյուրանոցների և բանտերի կառուցման համար։

Իրաքի կառավարությունը կատարելով իմպերիալիստների կամքը, ոչինչ չէր ձեռնարկում հովանավորելու և խրախուսելու ազգային արդյունաբերությունը։ Այդ հարցում նա չէր ունկնդրում ազգային բուրժուազիայի ձայնին, որը հովանավորության և օտարերկրյա կապիտալի մրցակցությունից պաշտպանվելու կարիք էր զգում։ Այս հարցը խիստ հուզում էր Իրաքի հասարակությանը։ Երկրի էկոնոմիկան օտարերկրյա կապիտալի ճիրաններից ազատելը և ազգային էկոնոմիկայի ստեղծելը Իրաքի ազգային-ազատագրական շարժման կարևոր շարժառիթներից մեկն էր։

Զափազանց հետամնաց և խղճուկ վիճակում էր գտնվում Իրաքի գյուղա-

[5] Տե՛ս. Н. Милованов. Ф. Сенфуль-Мулюков. Ирак вчера и сегодня. М., 1959, стр. 26.

[6] Տե՛ս, Doris Adams. Iraq's People and Resources. Los Angeles, 1958, p. 105.

տնտեսություններ։ Իրաքում մշակման համար պիտանի տարածություններ 50 մլն դոնումից (1 դոնումը՝ 0,25 հեկտարի) ավելի էր։ Սակայն ռևոլյուցիայի նախօրյակին մշակվում էր ընդամենը 20 մլն դոնում, որից յուրաքանչյուր տարի, ըստ Իրաքի գյուղատնտեսության մեջ կիրառվող սիստեմի, ցանվում էր միայն 10 մլն դոնում. մնացած 10 մլն թողնվում էր որպես հարոտ։ Այսպիսով ավելի քան 40 մլն դոնում հող թողնվում էր բոլորովին անմշակ։ Դա բացատրվում է նրանով, որ Իրաքի կառավարությունը քիչ էր մտահոգվում գյուղատնտեսության զարգացման հարցերով։ Այդ հողերը մշակելու համար հարկավոր էին կապիտալ ներդրումներ, գյուղատնտեսական մեքենաների, պարարտանյութերի լայն կիրառում, իռիգացիոն նոր սիստեմների կառուցում և այլն։ Մինչդեռ դրա համար բաց թողնվող դումարները չափազանց չնչին էին։ Իրաքի 1957 թ. պետական բյուջեում գյուղատնտեսության համար հատկացված միջոցները կազմում էին ողջ բյուջեի 3,4 տոկոսը, և դա այն ժամանակ, երբ ոստիկանության պահպանման ծախսերը կազմում էին բյուջեի 9,2 տոկոսը, իսկ կարիներներ և մոնիցիպալիտետներինը՝ 12,6 տոկոսը։ Սա պարզ կերպով ցույց է տալիս, թե նախապատվությունը ինչին էր տրվում։

Ինչպես նշում է Իրաքի քաղաքական գործիչ Քասրմ Հասանը, մինչև ռևոլյուցիան 20 մլն դոնումից 18 մլն պատկանում էր 2619 կալվածատերերի։ Իրարը խոշոր լատիֆունդիաների երկիր էր։ Ավելի քան 270 ֆեոդալներ տիրում էին 6 մլն դոնում կազմող հողատարածության։ Առանձին կալվածատերերի պատկանող հողերը հասնում էին կես միլիոն դոնումի։ Ամենախոշոր կալվածատերերից էր Հաշիմիդների արքայական տունը, որին պատկանող հողերի տարածությունը հասնում էր 177,596 դոնումի։ Հարկ է նշել, որ երբ Հաշիմիդները ոտք դրին Իրաք, նրանք չունեին և ոչ մի թիզ հող։

Ի՞նչ է թաքնված Իրաքի գյուղատնտեսությանը վերաբերող վերոհիշյալ թվերի ետևում։ Այն, որ Իրաքի գյուղատնտեսությունը (իսկ գյուղատնտեսության մեջ զբաղված էր երկրի ազգաբնակչության մոտ 80 տոկոսը) հիմնականում հողազուրկ էր։ Իրաքի ֆելլահներին պատկանում էր միայն 120 հազ. դոնում հող։ Դա նշանակում է, որ նրանց միայն չնչին մասը ուներ հող և այն էլ շատ սահմանափակ քանակով։ Ըստ վիճակագրական տվյալների, ռևոլյուցիայի նախօրյակին Իրաքում կային 25 հազար ֆելլահներ, որոնք ունեին 4 դոնումից պակաս հողակտորներ[9]։ Իսկ նրանք, ովքեր չունեին իրենց սեփական հող, կալվածատերերի մոտ աշխատում էին կամ որպես բանվորներ և կամ վարձակալվում էին։ Վարձակալման պայմանները շատ ծանր էին։ Չնայած որ Իրաքի կառավարությունը գյուղացիական ելույթների ճնշման տակ օրենք էր ընդունել, որ վարձակալվող գյուղացին բերքի 50 տոկոսից պակաս չպետք է ստանա, բայց կալվածատերերը այդ օրենքը չէին պահպանում և վարձակալում էին այնպես, ինչպես իրենք էին ցանկանում։ Կալվածատերը վերցնում էր բերքի 1/2-ը, իսկ եթե նա տալիս էր նաև սերմացուն, ապա վերցնում էր 2/3-ը։ Գյուղացու բաժինն ավելի քիչ էր արհեստական կերպով ոռոգվող հողերից։ Այդպիսի հողերից կալվածատերը վերցնում էր բերքի 5/7-ը[10]։ Եթե սրան ավելացնենք

[7] Տե՛ս, Qassim Hasan, Glimpses on the Democratic Aspects of the Iraqi Revolution, New Delhi, p. 5.

[8] Революция в Ираке, М., 1958, стр. 8.

[9] „Международная жизнь", № 1, 1959, стр. 125.

[10] Революция в Ираке, М., 1959, стр. 9.

այն, որ ողջ ոռոգման սիստեմը, գյուղատնտեսական ինվենտարը և սերմացուն հիմնականում գտնվում էր կալվածատերերի, շեյխերի ձեռքին, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի աղքատ ու թշվառ վիճակում էր գտնվում Իրաքի ֆելլահը։

Իրաքի գյուղատնտեսությունը հիմնականում լճացման պրոցեսում էր գտնվում։ Նա զարգանում էր ըստ լայնության, այսինքն նորանոր տարածություններ էին մշակվում, իսկ բերքատվությունը, որը գլխավորն է, համարյա չէր աճում։

Ինչ վերաբերվում է բրնձին, ապա նրա ցանքատարածությունները և բերքը նույնիսկ կրճատվեցին։

Գյուղատնտեսության այսպիսի վիճակը պետք է բացատրել նրանով, որ հողային ընդարձակ տարածությունների առկայության և գյուղացուն ցածր վճարելու պայմաններում կալվածատերերը առանձնապես շահագրգռված չէին արտադրողականության բարձրացումով։ Նրանք առանց այն էլ բարձր եկամուտներ, շահույթներ էին ստանում և շահագրգռված չէին գյուղատնտեսության մեջ նոր կապիտալ ներդրումներ կատարելու և բարեփոխումներ մտցնելու։ Մինչդեռ դրա կարիքը խիստ զգացվում էր։ Իրաքի գյուղացիությունը և դեմոկրատական ուժերը պահանջում էին ագրարային ռեֆորմ կիրառել երկրում, վերացնել խոշոր հողատիրությունը և գյուղացուն ապահովել հողակտորով։ Սակայն Իրաքի կառավարությունը, որը կալվածատերերի և շեյխերի կառավարություն էր, ձգտում էր անփոփոխ թողնել իրերի վիճակը։ Պառլամենտի 140 տեղերից 80—95-ը միշտ էլ պատկանում էր ռեակցիոն շեյխերին և կալվածատերերին։ Ունենալով այդպիսի մեծամասնություն, նրանք հեշտությամբ կարող էին տապալել ամեն մի օրինագիծ, որն առաջ էր քաշվում գյուղատնտեսության մեջ բարեփոխումներ կատարելու նպատակով։

Իսկ այն հողային օրենքները, որոնք ընդունվել են մինչև ռևոլյուցիան 1945 և 1951 թթ. խիստ սահմանափակ բնույթ ունեին և գյուղացիության դրության մեջ որևէ էական փոփոխություն չէին մտցնում։ Դրանցից առաջինն ի նկատի ուներ Դուջայլայի շրջանի հողերի յուրացումը, իսկ երկրորդը՝ 1951 թվականինը, պետական հողերի (Միրի սիրֆ) մի մասը հատկացնում էր... ոչ թե գյուղացիներին, այլ, ինչպես նշված էր օրենքի մեջ, պաշտոնաթող կառավարական աշխատողներին, սպաներին և ոստիկաններին։ Սա շատ տիպիկ է Իրաքի կառավարության բաղաքականության համար։ Նա հողը բաժանում է ոչ թե գյուղացիներին, որոնք դրա կարիքը ունեին, որոնք զբաղվում էին աղքատության մեջ, այլ պաշտոնաթող ոստիկաններին ու սպաներին, որոնք ոչ մի առնչություն չունեին գյուղատնտեսության հետ և որոնք բնակվում էին քաղաքներում։ Մինչև 1957 թ. վերջը, ըստ այդ երկու օրենքների, հող ստացան մոտ 20000 հոգի[11]։

Հողազրկությունը մեկ կողմից և վարձակալման ծանր պայմանները, շեյխերի ու կալվածատերերի կամայականությունները մյուս կողմից, հարկադրում էին ֆելլահին հայացքը ուղղել դեպի քաղաք։ Եվ ռևոլյուցիային նախորդող տարիներին մեծ հոսանք է սկսվում գյուղից դեպի քաղաք՝ Բաղդադ, Բասրա, Կիրկուկ, Մոսուլ և այլն։ Նրանք առանձնապես հաստատվում են

[11] UN Economic development in the Middle East 1957—1958. New York. 1959, p. 10.

Բաղդադում, քաղաքի չքավորների շրջանում, որը կոչվում է Ասիմա։ Ասիմայում ռեոլյուցիայից առաջ տեղավորվել էին մոտ 200000 փախած գյուղացիներ, որոնք հույս ունեին այստեղ գտնել կյանքի ավելի լավ պայմաններ։ Բայց շատ շուտով նրանք համոզվում էին, որ զուր հույսեր են տածել։

Իսկ ֆելլահների մի մասը, հույս չունենալով աշխատանք գտնել Բաղդադում կամ Իրաքի մյուս քաղաքներում, գնում էր օտար երկրներ՝ Կուվեյտ և այլն։ Այս բոլորը վկայում է այն խորը ճգնաժամի և դեգրադացիայի մասին, որ ապրում էր Իրաքի գյուղատնտեսությունը։

Գյուղատնտեսության և ընդհանրապես ագրարային հարաբերությունների հարցը երկրորդ մեծ պրոբլեմն էր, որ կանգնած էր Իրաքի առջև։ Այդ պրոբլեմը սրվում էր նաև այն կապակցությամբ, որ Իրաքում գոյություն ունեցող ագրարային հարաբերությունները, հողատիրության ձևը ոչ միայն երկրի հետամնացության ու աղքատության պատճառներից մեկն էին հանդիսանում, այլև այն հիմքը, որի վրա բարձրանում էր քաղաքական ռեակցիան երկրի ներսում։ Նրանց վրա էին հենվում նաև օտարերկրյա իմպերիալիստները, որոնք իրենց հերթին օգնում ու օժանդակում էին այդ հարաբերությունների, կալվածատերերի ու շեյխերի տիրապետության պահպանմանը։ Հետևաբար, Իրաքի գյուղատնտեսության մեջ բարեփոխումներ մտցնելու հարցը որոշ չափով կապվում էր երկրի դեմոկրատացման և իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի հետ։

Պարզ է, որ այդպիսի էկոնոմիկան և կառավարությունը չէին կարող ապահովել բարձր կենսամակարդակ աշխատավորների համար։ Կյանքի արժեքը տարեցտարի թանկանում էր, բարձրանում էին սննդամթերքների և այլ անհրաժեշտ ապրանքների գները։ Դա պարզ կերպով երևում է ՄԱԿ-ի տվյալներից։ Կյանքի արժեքի ինդեքսը 1953 թ. ընդունելով 100, հետևյալ պատկերն է ստացվում. 1939 թ.՝ 20, 1957 թ.՝ 113։ Ավելի էին թանկացել սննդամթերքները։ Այսպես, օրինակ, 1953 թվականի ինդեքսը դարձյալ ընդունելով 100, ստացվում է 1939 թ.՝ 18, 1957 թ.՝ 117 թ[12]։ Ինչպես տեսնում ենք, նախապատերազմյան տարիների հետ համեմատած, կյանքի արժեքը թանկացել էր 5.5 անգամ, իսկ սննդամթերքները՝ 6.5 անգամ։ Սա մի չտեսնված ծանր բեռ էր աշխատավորների՝ բանվորների, գյուղացիների, ինչպես նաև ծառայողների ու մանր առևտրականների ուսերին, որոնք ստանում էին ցածր եկամուտներ։ Բանվորների և գյուղացիների եկամուտները այնքան ցածր էին, որ դա լրիվ չէր բավարարում նույնիսկ սննդի համար և նրանք կիսաքաղց կյանք էին վարում։ Իսկ դրա փոխարեն Իրաքի հարուստները՝ կալվածատերերը, շեյխերը, խոշոր չինովնիկները և այլն, հսկայական եկամուտներ էին ստանում և ճոխ կյանք վարում։ Բաղդադի բժշկական կոլեջի պրոֆեսոր Մայքլ Քրիտչլիի հաշվումներով, 1956 թվականին Բաղդադի Ասիմա աղքատների ռայոնում բնակվողների յուրաքանչյուր շնչի շաբաթական ծախսումները սննդի վրա կազմել են 277 ֆիլս[13] (77 ցենտ) կամ նրա բյուջեի 57 տոկոսը, իսկ հարուստների ռայոնում բնակվողների յուրաքանչյուր շնչինը՝ կազմել է 3461 ֆիլս (10 դոլար) կամ նրա բյուջեի 18 տոկոսը[14]։ Ինչպես տեսնում ենք տարբերությունը հսկա-

---

[12] United Nations Statistical Yearbook, New York, 1958, p. 412, 424.

[13] 1000 ֆիլս։ 1 դինարի 1 անգլիական ֆունտ ստերլինգի։

[14] Ж. Ле Револьция в Ираке. М., 1959 стр. 11.

յական է։ Հարուստներն իրենց սննդի վրա ծախսում էին մոտ 13 անգամ ավելի, քան աղքատները։ Այս թիվը կիրառելի է նաև 1957 թ. ինչպես նաև 1958 թ. առաջին կեսի համար, որովհետև, ինչպես վերևում ցույց տվեցինք, կյանքի արժեքի թանկացումը 1956 թվականից հետո մինչև ռևոլյուցիան շարունակվում էր։

Բուրժուական որոշ տնտեսագետներ և պատմաբաններ փորձում են եկամուտների անհավասար բաշխման, Իրաքի աշխատավորների աղքատության փաստը կոծկել միջին թվերով։ Այդպես է վարվում Իրաքի էկոնոմիկայի մինիստրության վիճակագրության բյուրոյի էքսպերտ Դ-ր Ք. Ֆեննելոնը, որը Իրաքի 1957 թ. ազգային եկամուտը գնահատելով 292 մլն 400 հազ. դինար և բնակչության թիվն ընդունելով 6 մլն, նշում է, թե յուրաքանչյուր շնչի եկամուտը կազմում է 49 դինար կամ 136 դոլար։ Փաստորեն նույնն է անում նաև ամերիկյան տնտեսագետ Դ. Ադամսը[13], Արձանագրել միայն այդ թվերը և չփորձել բացել փակագծերը, նշանակում է կեղծել իրականությունը։ Չէ՞ որ այդ 292 միլիոնը Իրաքի հասարակության բոլոր անդամների միջև հավասարաչափ չէր բաժանվում։ Ինչպես երևում է Մայքլ Քրիտչլիի ուսումնասիրությունից, Բաղդադի հարուստների շաբաթական բյուջեն միայն կազմել է մոտ 55 դոլար (!)։ Դա նշանակում է, որ նրանց տարեկան բյուջեն կազմել է ոչ թե 136 դոլար, այլ 660 դոլարից էլ ավելի։ Ավելի բարձր էին կալվածատերերի և շեյխերի եկամուտները։ Իրենց ձեռքում կենտրոնացնելով հողային մեծ տարածություններ, գյուղատնտեսական մեքենաներ, սերմացու և այլն, նրանք մեծ շահույթներ էին ստանում գյուղացիներին շահագործելուց։ Կային հողատերեր, որոնց տարեկան եկամուտը ռևոլյուցիայի նախօրյակին կազմել է 300—350 հազ. դինար։ Եվ դա այն ժամանակ, երբ ֆելլահի տարեկան եկամուտը չէր անցնում 20 դինարից, որը մոտ երկուս ու կես անգամ պակաս էր Ք. Ֆեննելոնի դուրս բերած միջին թվերից։ Բանվորների եկամուտը թեև ավելի բարձր էր, քան գյուղացիներինը՝ 250—300 ֆիլս օրական, բայց այնուամենայնիվ չէր բավարարում նրանց պահանջները և թերասնումը, բնակարանային վատ պայմանները և այլն հատուկ էին նրանց այնպես, ինչպես և գյուղացիներին։ Պաշտոնական տվյալներով 7 հոգուց բաղկացած բանվորական ընտանիքի ամսական բյուջեն կազմում էր 12,2 դինար։ Այս գումարն անբավարար էր ընտանիքի ամենաստահմանափակ կարիքները անդամ բավարարելու համար։

Սրան պետք է ավելացնել Իրաքի կառավարության հարկային քաղաքականությունը, որն իր ողջ ծանրությամբ ընկած էր աշխատավորների ուսերի վրա։ Իրաքում հարկի ամենատարածված ձևը անուղղակի հարկն էր։ Հենց դա էլ հնարավորություն էր տալիս Իրաքի կառավարող կլիկին, նրանց, ովքեր մեծ եկամուտների տեր էին, հարկերից ազատվել և հարկերի հիմնական բեռը դնել բանվորների և գյուղացիների վրա։ Դա երևում է թեկուզ Իրաքի պետական բյուջեից։ Իրաքի 1957—1958 թթ. բյուջեում եկամուտները հարկերից ստացվել են հետևյալ կերպ՝

Եկամտահարկ և հարկ հարստության վրա—1957 թ.՝ 4,14 մլն դինար. 1958 թ. 4,331 մլն դինար։

Հարկեր հողի և հողային արդյունքների վրա—1957 թ.՝ 2,27 մլն դինար. 1958 թ.՝ 2,38 մլն դինար։

---

[13] Տե՛ս, D. Adams, Iraq's People and Resources. Los Angeles, 1958, p. 91.

Անուղղակի հարկեր—1957 թ.՝ 25, 83 մլն դինար, 1958 թ.՝ 27,24 մլն դինար։ Անուղղակի հարկերը համեմատած նախապատերազմյան՝ 1939 թվականի հետ ավելացել էին ավելի քան 9 անգամ[16]։ Դա ինքնին բնորոշ է ժողովրդական մասսաների նկատմամբ Իրաքի կառավարության կողմից վարած բաղաքականության համար։ Մյուս կողմից մենք տեսնում ենք, թե ինչպես խոշոր հողատերերը, որոնց ձեռքում էր կենտրոնացված Իրաքի հիմնական հողային ֆոնդը և որոնք մեծ շահույթներ էին ստանում դրանից, պետական գանձարանին էին տալիս մի չնչին գումար՝ 2 մլն դինար։

Իրաքի կառավարության հակաժողովրդական քաղաքականությունն ավելի ակնհայտ է դառնում, երբ ուսումնասիրում ես այն վիճակը, որ գոյություն ուներ առողջապահության ու լուսավորության բնագավառում ռևոլյուցիայի նախորյակին։ Նրանց գծով կատարվող հատկացումները կազմում էին պետական բյուջեի աննշան մասը։ Իրաքի 1957 թվականի բյուջեում առողջապահության ծախսերը կազմում էին բյուջեի 7,6 տոկոսը, լուսավորությանը՝ 6,4 տոկոսը, իսկ ոստիկանությանը՝ 9,2 տոկոսը։ Կառավարությանն ավելի շատ մտահոգում էր բանտեր կառուցելու հարցը, քան թե հիվանդանոցների կամ դպրոցների։ Հուստի պատահական չէ, որ Իրաքում այդքան շատ էին տարածված այնպիսի հիվանդություններ, ինչպես մալարիան, բրուցելոզը, թոքախտը, տրախոման, մանկական հիվանդությունները և այլն, որոնցից մահացողների թիվը հասնում էր տասնյակ հազարների։ Կյանքի նյութական վատ պայմանների և առողջապահության վատ դրվածքի հետևանքով Իրաքում կյանքի միջին տևողությունը խիստ ցածր էր՝ 28—30 տարի։ Դա հետևանք էր նաև երեխաների մահացության բարձր տոկոսի։

Իրաքի բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 90 տոկոսից ավելին, անգրագետ էր։ Երկրում քիչ էին դպրոցների թիվը։ 42 հազար երեխաներին ընկնում էր մեկ տարրական, իսկ 80 հազարին՝ մեկ միջնակարգ դպրոց[17]։

Կառավարությանը, իհարկե, բաց հայտնի էր երկրում տիրող այս դրությունը։ Սակայն նա, ոչ միայն միջոցներ ձեռք չէր առնում ժողովրդի դրության բարելավման ուղղությամբ, այլև տարեցտարի ավելացնում էր պալատի, կառավարության, ոստիկանության, ինչպես նաև պաշտպանողական ծախսերը։ Վերջինս սկսեց առանձնապես աճել, երբ Իրաքն իրեն կապեց Բաղդադի ագրեսիվ պակտի հետ։ Ռազմական ծախսերը 1957 թ. կազմել են բյուջեի 30 տոկոսը, իսկ 1958 թ.՝ 33 տոկոսը[18]։ Ի մի բերելով այս բոլոր թվերը, մենք տեսնում ենք, որ Իրաքի կառավարությունն իր միջոցների առյուծի բաժինը հատկացնում էր բանակի, ոստիկանության և բանտերի պահպանման համար, իսկ էկոնոմիկայի և ժողովրդի բարեկեցության բարձրացման հարցերը հետին պլանն էին մղված։ Իրաքի կառավարության այս հակաժողովրդական քաղաքականությունը ամեն կերպ պաշտպանում և քաջալերում էին ոտարերկրյա իմպերիալիստները, դրա մեջ տեսնելով իրենց գերիշխանությունը պահպանելու գրավականներից մեկը։

Ռևոլյուցիային նախորդած տարիներին Իրաքի ներքաղաքական կյանքը իր վրա կրում է ռեակցիայի բացարձակ տիրապետության կնիքը։ Դեռևս

[16] UN Statistical Yearbook. New York, 1958, p. 486.

[17] Н. Милованов, Ф. Сейфуль-Мулюков, Ирак вчера и сегодня, М. 1959, стр 33.

[18] ՏԼ՝ Նույն տեղում, էջ 29 և Революция в Ираке, стр. 8.

դեմոկրատական պարբերականներ և երկրի առաջադեմ ուժերը զրկված էին իրենց խոսքն ասելու, իրենց կամքը դրսևորելու հնարավորությունից։ Իրաքի պառլամենտում նստած էին շեյխերը, խոշոր հողատերերը, իմպերիալիզմի հետ համագործակցելու կողմնակիցները։ Ժողովուրդն այնտեղ չուներ իր ներկայացուցիչները։ Իրաքի պառլամենտը փաստորեն դարձիք էր հանդիսանում թագավորի և կառավարության ձեռքին, որի օգնությամբ նրանք անց էին կացնում ամեն տեսակի ռեակցիոն և հակաժողովրդական օրինագծեր։ Հետաքրքիր է նշել, որ Իրաքի պառլամենտի առջև Իրաքի կառավարությունը ոչ մի անգամ չի դրել վստահության քվեի հարցը։ Ընդհակառակը, պառլամենտն ինքն է կառավարության վստահության կարիքն զգացել։ Պատահական չէ, որ Իրաքի պառլամենտը միայն մեկ անգամ է լրիվ՝ չորս տարի գործել։ Իրաքի ժողովուրդն այսպիսի պառլամենտից ակնկալումներ չուներ։

Իրաքում հաստատված էր ոստիկանական խիստ ռեժիմ, ուժեղ կերպով էր գործում գաղտնի ոստիկանությունը։ Քաղաքացիներին լրտեսները հետևում էին ամենուրեք։ Նրանց ընդհանուր թիվը ռեոլյուցիայից առաջ հաշվվում էր մոտ 24.000[10], թեև ոմանց կարծիքով այդ թիվը խիստ նվազեցված է։

Կառավարությունը ճնշում էր ազգային փոքրամասնություններին, հատկապես քրդերին, հաշվի չառնելով նրանց ազգային պահանջները։ Նա հետապնդում էր խաղաղության կողմնակիցներին, երիտասարդական կազմակերպություններին և բոլոր նրանց, ովքեր դժգոհ էին Բաղդադի ռազմակառքին լծված կառավարության քաղաքականությունից, իմպերիալիստների միջամտությունից, ովքեր պահանջում էին վարել Իրաքի և արաբական մյուս ժողովուրդների շահերին համապատասխան քաղաքականություն։

Ահա համառոտակի այսպիսին էր Իրաքի տնտեսական վիճակը և ներքաղաքական կյանքը ռեոլյուցիային նախորդող տարիներին։ Իրաքում ստեղծված այս ծանր վիճակը խորը դժգոհություն էր առաջացնում երկրի ազգաբնակչության ամենալայն խավերի մոտ։ Նրանք հանդես էին գալիս Իրաքի կառավարության ներքին ու արտաքին քաղաքականության, իմպերիալիստների ոտնձգությունների դեմ։ Ներքին ու արտաքին ռեակցիոն ուժերի դեմ մղվող պայքարին ակտիվորեն մասնակցում էին բանվորները, գյուղացիները, ուսանողությունը, ինտելիգենցիան, ինչպես նաև ազգային բուրժուազիայի այն շերտերը, որոնք նեղվում էին օտարերկրյա կապիտալի տիրապետությունից։

1956 թ. տեղի է ունենում Իրաքի հայրենասիրական ուժերի միավորումը։ Ստեղծվում է Միացյալ ազգային ճակատ, որի մեջ մտնում են Ազգային դեմոկրատական, Կոմունիստական, Անկախության (Ալ-Իստիքլյալ) և ԲԱԱՍ (արաբական վերածնության սոցիալիստական պարտիա) պարտիաները։ Ստեղծելով այն, Իրաքի հայրենասիրական ուժերը ելնում էին այն բանից, որ ոչ մի պարտիա ի վիճակի չէ առանձին, մյուս պարտիաներից և հայրենասիրական ուժերից բաժան, իրագործել Իրաքի առջև կանգնած ազգային խնդիրները։ Սակայն Միացյալ ազգային ճակատը աղատ չէր գործում և լայն կապեր չուներ երկրի մասսայական կազմակերպությունների հետ։ Բանը նրանումն է, որ նա գործում էր Իրաքի ռեակցիոն ռեժիմի պայմաններում, որը և ինչպես նշում էր Իրաքի Կոմպարտիայի քարտուղար Սալյամ Ադիլը, կանխորոշեց նրա աշ-

[10] Տե՛ս, Caractacus, Revolution in Iraq, London, 1959, p. 53.

խատանրի նեղ. ընդհատակյա բնույթը[20]։ Այնուհանդերձ, Միացյալ ազգային ճակատը որոշակի գեր խաղաց ռևոլյուցիայի նախապատրաստման, Իրաքի աշխատավորների ելույթների կազմակերպման գործում։

Իրաքի ժողովուրդը հանդես էր գալիս Բաղդադի ագրեսիվ պակտում Իրաքի մասնակցելու դեմ։ Նա երբեք չհաշտվեց այդ ռազմական խմբավորման գոյության հետ, որը մի գործիք էր արևմտյան իմպերիալիստների ձեռքին պահպանելու իրենց գաղութային տիրապետությունները և ճնշելու ազգային-ազատագրական շարժումները Մերձավոր և Միջին արևելքի երկրներում։ Իրաքի աշխատավորների պայքարը Բաղդադի պակտի դեմ հատկապես ուժեղանում է սկսած 1957 թվականից։ Եվ դա պատահական չէր։ Արդեն երկու տարի էր անցել այդ պակտի լույս աշխարհ գալուց ի վեր և Իրաքի ժողովուրդը գործնականում համոզվել էր, թե ինչ տնտեսական և քաղաքական վնասներ է նա հասցրել իր երկրին։ Ինչպես հայտարարեց պառլամենտում օպոզիցիայի լիդեր Մուհամմեդ աշ-Շաբիբին, Երկիրը լրիվ կերպով դրված է Բաղդադի պակտի հսկողության տակ։ Պակտի խորհուրդը բացահայտորեն միջամտում է Իրաքի ներքին գործերին։ Նա միջամտում է մեր տնտեսական և ռազմական գործերին»[21]։

Բաղդադի պակտին մասնակցելը ծանր էր անդրադառնում Իրաքի բյուջեի վրա, պահանջելով լրացուցիչ ծախսեր, որոնք կապված չէին Իրաքի անվտանգության շահերի հետ։ 1957 թ. հոկտեմբերին այդ հարցի շուրջը մերկացումներով հանդես եկավ «Ալ-Ահրամ» թերթը, որը նշում էր, որ Իրաքի բյուջեից անհետացել է 18 մլն ֆունտ, որի մի մասը ծախսվել է Իրաքի անվտանգությունն ապահովելու պատրվակի տակ, իսկ մյուս մասը ծախսվել է քայքայիչ նպատակների համար Սիրիա զենք ուղարկելու վրա[22]։ Սա խորը զայրույթ առաջացրեց Իրաքի աշխատավորների մոտ։ 1957 թ. նոյեմբերի 5-ին հատուկ հայտարարությամբ հանդես եկավ Միացյալ ազգային ճակատը, որտեղ մերկացվում էր Իրաքի կառավարության ողջ ներքին և արտաքին քաղաքականությունը։ Հայտարարության մեջ որպես երկրում բարեփոխումներ կատարելու կարևոր պայմաններից մեկը առաջարկվում էր դուրս գալ Բաղդադի պակտից և հրաժարվել արևմտյան իմպերիալիստների շահերը պաշտպանելու քաղաքականությունից։ 1957—1958 թվականներին Բաղդադի պակտի դեմ ուղղված բազմաթիվ ելույթներ են տեղի ունենում երկրի մի շարք վայրերում՝ Բաղդադում, Բասրայում, Մոսուլում, Էն-Նեջեֆում և այլն։ Դրանցից հատկապես պետք է նշել 1958 թ. մարտին և ապրիլին տեղի ունեցած ցույցերը։ Բաղդադում և մյուս քաղաքներում տեղի են ունենում բազմահազարանոց ցույցեր։ Ցուցարարները կրում են «Կորչի Բաղդադի պակտը» և այլ հակաիմպերիալիստական լոզունգներ, պահանջում, որ Իրաքն անհապաղ դուրս գա Բաղդադի պակտից և այլն։ Ցուցարարների դեմ կառավարությունը նետում է ոստիկանական խոշոր ուժեր, որի գործողությունների հետևանքով բազմաթիվ ցուցարարներ սպանվում և վիրավորվում են[23]։

---

[20] Տե՛ս. Специальный Бюллетень Института Востоковедения АН СССР. М. 1959. стр. 25.

[21] ТАСС. Ирак. (открытое досье). 19 марта. 1958. л. 3

[22] ТАСС. Иностранный справочный отдел. Ближний и Средний Восток. Т. IV. л. 28.

[23] Նույն տեղում. Ирак. 15 марта. 5 апреля 1958. лл. 3, 4.

Իրաքի աշխատավորական մասսաների ելույթները Բաղդադի ռազմական խմբավորման դեմ խոսում են այն մասին, թե ինչքան էին սխալվում իմպերիալիստական ուժերը, որոնք Իրաքը համարում էին Բաղդադի ագրեսիվ պակտի ամենահուսալի անդամը։ Դա միաժամանակ ցույց է տալիս, որ Իրաքի դեմոկրատական ուժերը համակված էին ամենայն վճռականությամբ, երկիրը ազատագրելու իմպերիալիստական այդ խմբավորման կապանքներից։

Իրաքի աշխատավորների ելույթների մեջ կարևոր տեղ է գրավում պայքարը «էյզենհաուերի դոկտրինայի» դեմ, որը լույս աշխարհ եկավ 1957 թ. հունվարի 5-ին։ Նրա նպատակն էր խեղդել ազգային-ազատագրական շարժումները արաբական երկրներում և ամերիկյան կապիտալին ենթարկել նրանց էկոնոմիկան։ Ամերիկյան իմպերիալիզմը փաստորեն հանդես էր գալիս ժանդարմի դերում։ Ընահատելով այդ դոկտրինայի նշանակությունը, Իրաքի պրոգրեսիվ հասարակական գործիչ Ֆաիր Ֆարմանն իրավացիորեն նշում էր, որ «էյզենհաուերի դոկտրինան» ողջ Արաբական Արևելքին սպառնում է նոր ագրեսիայով[24]։

Իսկ ինչ դիրք գրավեց Իրաքի կառավարությունը այդ դոկտրինայի հանդեպ։ Նա բացահայտ կերպով հավանություն տվեց «էյզենհաուերի դոկտրինային» և դրա սկզբունքների հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքեց տնտեսական անհավասար համաձայնագիր։

Սակայն բոլորովին այլ դիրք գրավեցին Իրաքի աշխատավորական մասսաները և առաջադիմական շրջանները։ Նրանք ի դեմս «էյզենհաուերի դոկտրինայի» տեսնում էին Իրաքի սուվերենությանը և էկոնոմիկային սպառնացող նոր քայլ։

Իրաքի աշխատավորական մասսաները բազմաթիվ նամակներ, պետիցիաներ են ուղարկում Բաղավորին, կառավարությանը և պառլամենտին, պահանջելով հրաժարվել այդ դոկտրինայից, նշելով, որ դա հետապնդում է արաբական երկրներում ամերիկյան իմպերիալիզմի ազդեցությունը ուժեղացնելու նպատակներ։ Նրանք լրիվ կերպով պաշտպանեցին Իրաքի քաղաքական գործիչ Հասան Ջալիլիի պահանջը՝ բացահայտորեն դատապարտել ամերիկյան իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականությունը և բոյկոտի ենթարկել ամերիկյան ինֆորմացիոն կենտրոնները Իրաքում։ Սակայն Իրաքի կառավարությունը չէր ցանկանում հաշվի առնել ժողովրդի պահանջները։ Դրան Իրաքի բանվորները, գյուղացիները և ուսանողները պատասխանեցին իրենց ելույթներով, որոնցից հատկապես պետք է նշել 1958 թ. հունիսի 18-ին Բաղդադում տեղի ունեցած հուժկու ցույցը։ Բաղդադի փողոցներն են դուրս գալիս մոտ 4 հազար բանվորներ ու ուսանողներ՝ պահանջելով հրաժարվել էյզենհաուերի իմպերիալիստական դոկտրինայից և Բաղդադի ագրեսիվ պակտից։ Թե դա ինչպիսի հզոր և կազմակերպված ելույթ էր, խոսում է այն փաստը, որ ցուցարարների դեմ նետված ոստիկանական խոշոր ուժերն օգտագործում են դնդացիրներ և նռնակներ։ Ավելի քան 3 ժամ Իրաքի հայրենասերները կատաղի դիմադրություն են ցույց տալիս ոստիկանությանը։ Սակայն վերջինիս հաջողվում է ճնշել բանվորների և ուսանողների այդ ելույթը։ Սպանվում է 42 մարդ, վիրավորվում 120 և ձերբակալվում՝ 300 ցուցարար[25]։

[24] Ганб Фарман. Ирак в годы черного режима. М. 1958. стр. 100.
[25] ТАСС. Ирак. 20 июня 1958. л. 22.

«Էյզենհաուերի դոկտրինայի» դեմ ուղղված նման ելույթներ տեղի ունեցան նաև երկրի մյուս վայրերում։ Համաձայնվելով «Էյզենհաուերի դոկտրինայի» հետ և ճնշելով նրա դեմ ուղղված ելույթները, Իրաքի կառավարությունն էլ ավելի մերկացրեց իր հակաժողովրդական դեմքը և խորացրեց այն անջրպետը, որ գոյություն ուներ նրա և ժողովրդի միջև։ Սրան այս բոլորին ավելացնենք և այն, որ Իրաքը մի գործիք էր արևմտյան իմպերիալիստների ձեռքին, որի օգնությամբ նրանք ամեն տեսակ դավադրություններ էին նյութում արաբական մյուս պետությունների, հատկապես Սիրիայի և Լիբանանի դեմ և ջլատում արաբների ազգային ազատագրական շարժման միասնությունը, ապա պատկերն ավելի կատարյալ կդառնա։

Այսպիսով, Իրաքը Բաղդադի ռազմական պակտից դուրս բերելը և այնպիսի կառավարություն ստեղծելը, որը դադարեր գործիք լինելուց իմպերիալիստների ձեռքին և վարեր Իրաքի ժողովրդի և արաբական մյուս պետությունների շահերին համապատասխանող քաղաքականություն, հանդիսանում էր Իրաքի ազգային-ազատագրական շարժման մյուս կարևոր խնդիրը։

Վերը շարադրածից պարզ է դառնում, որ Իրաքի ազգային-ազատագրական ուժերի պահանջները հանգում էին հետևյալին. ազգային արդյունաբերության ստեղծում, ագրարային ռեֆորմի կիրառում, աշխատավորների նյութական պայմանների բարելավում, դեմոկրատական ազատությունների հաստատում, հրաժարվել իմպերիալիստական ռազմական խմբավորումներին մասնակցելուց, չհամագործակցել իմպերիալիստների հետ և վարել այնպիսի քաղաքականություն, որն ապահովի Իրաքի լրիվ անկախությունն ու սուվերենությունը և համապատասխանի արաբական աշխարհի ազգային-ազատագրական շարժման շահերին։

Սկսած 1958 թվականի ապրիլից իրադրությունը Իրաքում կրկին խիստ սրվեց։ Դա կապված էր պառլամենտի ընտրությունների հետ, որոնք նշանակված էին մայիսի 5-ին։ Հետպատերազմյան տարիներին պառլամենտական ընտրություններն Իրաքում միշտ էլ ընթացել են ոստիկանական տեռորի պայմաններում և թույլ են տրվել մեծ կեղծումներ։ Ելնելով անցյալի դառն փորձից, Իրաքի ընդդիմադիր ուժերը պառլամենտից պահանջեցին ընտրություններն անցկացնելու համար ստեղծել չեզոք կառավարություն։ Սենատում օպոզիցիայի լիդեր Մուհամմեդ աշ-Շաբիբին հայտարարեց, որ «ժողովուրդը չի պաշտպանում Նուրի Սաիդի կառավարությունը։ Եվ նրանք ովքեր պառլամենտում հանդես են գալիս կառավարության պաշտպանությամբ, միայն իրենք իրենց են ներկայացնում։ Կառավարության քաղաքականությունը երկիրը տանում է դեպի կատաստրոֆա»[29], իսկ մեկ ուրիշ սենատոր՝ Սամի Բաշարիմը հայտարարեց, որ Նուրի Սաիդի կառավարությունը խեղդել է հասարակական ազատությունները, և որ կառավարական ռեժիմը պահպանվում է բռնության ու ահաբեկման օգնությամբ։

Ինչպես և պետք էր սպասել, պառլամենտը չբավարարեց օպոզիցիայի պահանջը չեզոք կառավարություն ստեղծելու մասին։ Դրան պատասխան երկրի հայրենասեր ուժերը ժողովրդին կոչ արին բոյկոտել ընտրությունները։ 1958 թ. ապրիլի 24-ին Բաղդադի կենտրոնական հրապարակում տեղի ունեցավ մեծ ցույց, որի ժամանակ ցուցարարները պահանջում էին ոչ միայն Նուրի

[29] Տե՛ս TACC. Ирак, 11 апреля, 1958, л. 3.

Սաիդի կառավարության հրաժարականը, այլև առաջ քաշեցին «Նորի միապետություն» լոզունգը[27]։

Ընտրությունների օրը, մայիսի 5-ին, կառավարությունը վախենալով ժողովրդական ելույթներից, Բաղդադում և մի շարք այլ վայրերում մտցրեց պաշարողական դրություն։ Ոստիկանները և զինվորները շրջում էին փողոցներում։ Ջսնցկացվեց նախընտրական կամպանիա։ Կառավարությունը արգելեց իր կողմից հաստատված դեպուտատների դեմ այլ թեկնածուներ առաջ քաշել։

Պառլամենտական այսպիսի «ընտրությունները» խորը զայրույթ առաջացրին ժողովրդի մոտ։ Որպես բողոք Բաղդադում, Բասրայում, Կիրկուկում, Մոսուլում, Քերբելայում և այլ վայրերում տեղի են ունենում համընդհանուր գործադուլներ, որոնք տևեցին մի քանի օր։ Մի շարք վայրերում տեղի են ունենում նաև հակակառավարական ցույցեր։ Գործադուլավորները և ցուցարարները պահանջում էին պառլամենտի արձակում և այնպիսի կառավարության ստեղծում, որը պաշտպաներ Իրաքի ազգային շահերը։ Կառավարությունը վախենալով ժողովրդական շարժման լայն թափից ԱՄՆ-ի, Անգլիայի և Թուրքիայի դեսպանատների, ինչպես նաև թագաժառանգ Աբդուլ Իլլահի և Նուրի Սաիդի տների մոտ դնում է ուժեղացված զինվորական պահակախումբ։ Վախեցած կառավարությունը խստացրեց իր ռեպրեսիաները և կիրառեց մասսայական ձերբակալություններ։ Միայն Բաղդադում ձերբակալվեց 637 մարդ, իսկ մյուս վայրերում 2500[28]։

Քաղաքական դրությունը երկրում էլ ավելի շիկացավ և մասսաների դժգոհությունն ավելի ուժեղացավ այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ Իրաքը օգնում է Լիբանանի ժողովրդի դահիճ Շամունին։ Իրաքի սպաները և զինվորները Շամունի զորքերի հետ միասին կռվում էին Լիբանանի ապստամբ ժողովրդի դեմ։

Ինչպես վերևում նշեցինք, Իրաքում ստեղծվել էր Միացյալ ազգային ճակատ։ Բացի դրանից գոյություն ուներ «Ազատ սպաներ» գաղտնի կազմակերպությունը, որի մեջ միավորվել էին հայրենասեր զինվորականները, նրանք, ովքեր դժգոհ էին Ֆեյսալ-Նուրի Սաիդի ռեժիմից։ Այդ գաղտնի կազմակերպությունը ղեկավարում էր Իրաքի բանակի 20-րդ բրիգադի հրամանատար, գեներալ Աբդել Քերիմ Քասրմը։ Միացյալ ազգային ճակատը և «Ազատ սպաների» կազմակերպությունը կապ են հաստատում միմյանց հետ և համաձայնության գալիս իրենց գործողությունների ծրագրի շուրջը։ Նրանց նպատակն էր տապալել միապետությունը և հաստատել ռեսպուբլիկա, դուրս գալ Բաղդադի պակտից, հրաժարվել «էյզենհաուերի դոկտրինայից», պայմաններ ստեղծել ազգային էկոնոմիկայի զարգացման համար, հաստատել դեմոկրատական ազատություններ երկրի ներսում և այլն։

1958 թ. հուլիսի 14-ին Ստամբուլում նշանակված էր Բաղդադի պակտի խորհրդակցությունը, որտեղ այլ հարցերի հետ միասին պետք է քննարկվեր նաև Լիբանանում ժողովրդական հուզումները ճնշելու հարցը։ Ըստ որում պաշտոնապես Իրաքին էր հանձնարարվում կատարել այդ «պատվավոր» խնդիրը։ Սակայն Բաղդադի պակտի այդ խորհրդակցությանը վիճակված չէր տեղի ունենալ։ Իրաքի հայրենասեր ուժերը տվյալ մոմենտը հարմար գտան հանդես գալու համար։ 20-րդ բրիգադին, որի հրաման-

[27] Նույն տեղում, 21 апреля, 1958, л. 8.
[28] ТАСС, Ирак, 10 мая, 1958, л. 15.

նատարը Քասրմն էր, հրաման էր տրված հուլիսի 14-ին մեկնել Հորդանան՝ փրկելու Հուսեյն թագավորի գահը։ Սակայն Քասրմը մեկնեց ոչ թե Հորդանան, այլ շարժվեց Բաղդադի վրա։ Զորքերը Բաղդադ մտան հուլիսի 14-ի առավոտյան։ Միապետությունը տապալվեց։ Ստեղծվեց մի նոր արաբական ռեսպուբլիկա՝ Իրաքի ռեսպուբլիկան։ Ֆեյսալ թագավորը և թագաժառանգ Աբդուլ Իլլահը, որը կարգադրել էր պահակախմբին կրակ բացել պալատ մտած զինվորների վրա, սպանվեցին։ Նուրի Սաիդին սկզբում հաջողվեց կանացի շորերով ծպտրված փախչել, սակայն շուտով նրան ճանաչեցին և բռնեցին։ Նա նույնպես սպանվեց։ Այն փողոցը, որտեղ սպանվեց Նուրի Սաիդը, կոչվեց Ազատության փողոց։

Իրաքում տեղի ունեցած ռևոլյուցիան ըստ իր բնույթի, ինչպես նշված է 1960 թ. նոյեմբերին Մոսկվայում կայացած Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության հայտարարության մեջ, հակաիմպերիալիստական, հակաֆեոդալական, ազգային, դեմոկրատական ռևոլյուցիա էր։ Նա այդպիսին է ըստ իր առջև կանգնած խնդիրների (միապետության տապալում և ռեսպուբլիկայի հաստատում, ֆեոդալիզմի մնացուկների, օտարերկրյա կապիտալի ազդեցության լիկվիդացում և այլն) և ըստ իր շարժիչ ուժերի (բանվորներ, գյուղացիներ, ուսանողներ և ազգային բուրժուազիայի այն շերտերը, որոնք կապված չեն օտարերկրյա իմպերիալիստների հետ)։

1958 թ. հուլիսի 14-ին կազմվեց Իրաքի ռեսպուբլիկայի կառավարությունը՝ գեներալ Աբդել Քերիմ Քասրմի գլխավորությամբ։ Իրաքի աշխատավորները ցնծությամբ ընդունեցին ռևոլյուցիայի հաղթանակը և ռեսպուբլիկայի հռչակումը։ Նորաստեղծ կառավարությունն անհապաղ կիրառեց մի շարք կարևոր միջոցառումներ՝ ռեսպուբլիկան ամրապնդելու և աշխատավորների վիճակը բարելավելու ուղղությամբ։ Հենց նույն օրը՝ հուլիսի 14-ին չեղյալ հայտարարվեց միապետական սահմանադրությունը, իսկ հուլիսի 26-ին Քասրմը հռչակեց Իրաքի ռեսպուբլիկայի ժամանակավոր կոնստիտուցիան։ Հուլիսի 17-ին կառավարությունն ընդունեց դեկրետ՝ քաղաքական բանտարկյալներին ներում շնորհելու մասին։ 1958 թ. սեպտեմբերի 30-ին Իրաքի կառավարությունն ընդունեց կարևոր օրենք՝ ագրարային ռեֆորմ անցկացնելու մասին։

Իրաքի ռևոլյուցիան մեծ հարված էր արևմտյան իմպերիալիստներին և Բաղդադի ռազմական պակտին։ Դրանով նրանք իրենց հերթական պարտությունը կրեցին արաբական աշխարհում։

Իրաքի կառավարության դրական և կարևոր քայլերից մեկը պետք է համարել այն, որ նա վերականգնեց դիվանագիտական հարաբերությունները ՍՍՌՄ-ի հետ, ճանաչեց Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկան, բարեկամական կապեր հաստատեց սոցիալիստական լագերի երկրների և մյուս խաղաղասեր երկրների հետ։ Դա ամրապնդեց Իրաքի միջազգային դրությունը։

Այսպիսով, Իրաքի ժողովրդի երկարատև ու համառ պայքարը միապետական ռեժիմի դեմ պսակվեց հաղթանակով։ 1958 թ. հուլիսի 14-ի ռևոլյուցիայով Իրաքի պատմության մեջ սկսվում է նոր էտապ։